ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
PUBLIC COUNCIL OF RA
ОБЩЕСТВЕННЫЙ СОВЕТ РА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բուզանդի 3, 0010, Երևան, / 3 Buzand St., 0010 Yerevan / Ул. Бузанда 3, 0010, Ереван, Հեռ. /Tel./Tel: (010)515620

№ 20.11.2020/ Ե-52 «20».«11».2020թ.

Պարոն Մուշեղ Հովսեփյանին,

[redacted]

Հարգելի պարոն Հովսեփյան,

Ի պատասխան Ձեր նոյեմբերի 16-ի հարցման՝ հայտնում ենք, որ սեպտեմբերի 27-ից սկսած՝ Հանրային խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ Հանրային խորհրդում ձևավորվել է օպերատիվ շտաբ, որը հրատապ կարգով պարբերաբար քննարկել է պատերազմի ընթացքը, կապ է պահպանել իրավասու մարմինների հետ և աջակցություն է ցուցաբերել օրենսդրությամբ և սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում: Երկու անգամ տեղի է ունեցել Հանրային խորհրդի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի նիստ, որոնցում քննարկվել են պատերազմական գործողություններին առնչվող օրակարգային հարցեր և առաջարկվել են դրանց լուծումներ: Սփյուռքի հանձնաժողովը, համագործակցելով Հանրային խորհրդի նախագահի հետ, զբաղվել է ԱՄՆ-ից, Եվրոպայից, Ռուսաստանից, Մերձավոր Արևելքից ժամանած կամավորների զինվորագրման, թիկունքում ռազմաճակատին աջակցելուն ուղղված տեղական արտադրությունների ստեղծման, զոհված, վիրավորված և անհայտ կորած

զինծառայողների խնդիրներով: Հանձնաժողովը մշտական կապի մեջ է եղել Սփյուռքի հարցերով հանձնակատարի, Պաշտպանության, Առողջապահության և Արտաքին գործերի նախարարությունների հետ:

Հանրային խորհրդի քարտուղարության պետը հանդիպել է Հանրային խորհրդի հանձնաժողովների մի շարք նախագահների հետ, նրանցից լսել ռազմական դրության ընթացքում հանձնաժողովների գործունեության և ընթացիկ խնդիրների վիճակի մասին:

Կազմակերպվել են հանդիպումներ և հեռախոսազրույցներ օտարերկրյա գործընկերների, մասնավորապես՝ ՀՀ-ում ՌԴ դեսպանի, ՀՀ-ում Չինաստանի գործերի ժամանակավոր հավատարմատարի հետ, ինչպես նաև ՄԱԿ հայաստանյան գրասենյակի մշտական համակարգողն ու ծրագրերի ղեկավարները հրավիրվել են Հանրային խորհուրդ՝ քննարկելու ՄԱԿ դերակատարումը հումանտար աղետի կանխարգելման գործում:

Փակ աշխատանքային ընթացակարգով քննարկվել, պատրաստվել և հասցեատերերին են ուղղվել եռալեզու, այդ թվում՝ ադրբեջաներեն կոչ՝ ուղղված մերձկասպյան և հարավ-արևելյան Կովկասի բնիկ ժողովուրդներին, մեդիա մոնիթորինգի տվյալներ՝ ուղղված ՀԽ միջազգային գործընկերներին և այլն, իսկ նոյեմբերի 10-ից հետո Հանրային խորհրդի նախագահը զբաղված է պատերազմի զոհերի, վիրավորների և անհետ կորածների ամենատարբեր խնդիրներով:

Այն մասին, թե արդյոք ՀԽ անդամները առաջարկներ ներկայացրել են ինձ, թե՞ ոչ, կարող եմ վստահաբար ասել, որ հանդիպում-քննարկումները, ուղերձների մշակումները, փակ ձևաչափով ամենատարբեր գործընթացներ իրականացվել են հենց խորհրդի անդամների առաջարկներով, ինչպես նաև կազմակերպչական գործընթացներում նրանց գործուն աջակցությամբ:

Նոյեմբերի 10-ից հետո նախաձեռնված 2 նիստերը հետաձգվել են, որովհետև ՀԽ անդամների մի մասը դեռ Արցախում է (նրանք առաջնագիծ են մեկնել տարբեր հանձնառություններով պատերազմի հենց առաջին օրերից), մի մասը, ցավոք, վատառողջ է՝ կապված վիրուսների տարածվածության բարձր մակարդակով: Այնուհանդերձ, նոյեմբերի 19-ին մասնակի ներկայությամբ գումարվել է արտահերթ նիստ, որտեղ քննարկվել են առաջնահերթ մի շարք հարցեր:

Նոյեմբերի 10-ից հետո սոցիալական երկխոսությանն աջակցելու նպատակով ՀԽ անդամներն ապակենտրոն աշխատանքային սկզբունքով հանդիպումներ են ունեցել քաղաքական տարբեր հայացքներ կրող, տարբեր ուժերի համակիրների և ներկայացուցիչների հետ՝ հորդորով զերծ մնալ ներքին լարվածությունից և առկա մտահոգությունները քննարկել կառուցողական միջավայրում: Այս հանդիպումների մասին տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ:

Հարգանքով

ՀՀ Հանրային խորհրդի քարտուղարության պետ

Արտաշես Խալաթյան